ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի հունիսի 2-ի N 2 արձնագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-26/94**

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար Նորապատ բնակավայրի փողոցների ջրագծերի փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-26/94 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Գնման ընթացակարգի հրավերում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

Փոփոխության նկարագրություն: Անհրաժեշտություն է առաջացել գնման ընթացակարգը փոփոխել և գնումը կազմակերպել կիրառելով որակավորման չափանիշներ, կիրառելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1) մասի ժ. ենթակետով սահմանված պահանջները:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Վարդանյան:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ Մեծամորի համայնքապետարան